

ՀԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՅԱԿԱՆ + ԲԱՅ > ԱԾԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՈՎ
(տարժամանակյա հայեցակետ)

Լալիկ Խաչատրյան

Բանասիրական գիտությունների դոկտոր

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ

ՀՀ, Երևան, Տիգրան Մեծի 17

Էլ. հասցե՝ lingual51@mail.ru

ORCID: 0000-0002-2107-6210

Հոդվածը ներկայացվել է 03.10.2022, գրախոսվել է 22.03.2024, ընդունվել է տպագրության 25.04.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.1-150

Ամփոփում

Հինհայերենյան հարադրությունները, որոնք գոյական + բայ կաղապարով փոխակերպվել են համադրական բարդությունների, արդի հայերենում հատկանշվում են ածականի խոսքիմասային արժեքով, որ պայմանավորված է բարդության երկրորդ բաղադրիչի՝ բայահիմքի արտահայտած հատկանշային իմաստով՝ ենթակայական դերբայի նշանակությամբ:

Դիտարկված կաղապարով առաջացած բարդությունները սերում են հին հայերենի անվանաբայական հարադրություններից, որոնց բաղադրիչներն արտահայտում են ստորոգյալ-ուղիղ խնդիր շարահյուսական հարաբերություն: Բաղադրիչների իմաստային կապը պահպանվում է նաև նրանցից սերած համադրական բարդությունների դեպքում: Իբրև այդ կարգի հարադրությունների բայական բաղադրիչներ՝ հանդես են գալիս ներգործական սեռի հետևյալ բայերը՝ մատուցանեմ, առնեմ, արկանեմ, խնդրեմ, պահեմ, դնեմ և այլն, որոնց հետ հարադրություն են կազմում պատարագ, աւար, ուխտ, աղաթք, անծն, ահ, բան, օրէնք, վրէժ և այլ գոյականներ:

Գոյական + բայ > ածական կաղապարով առաջացած բարդությունների սերող հիմքը՝ բայական բաղադրիչը, փոխակերպական կառույցներում հանդես է գալիս կա՛մ առաջին (վրէժ խնդրեմ > վրէժխնդիր, պահեմ զօրէնս > օրինապահ, պաշտեմ զօրէնս > օրինապաշտ), կա՛մ երկրորդ հիմքի ձևով (զաղօթս առնեմ > աղօթարար, օրէնս դնեմ > օրէնսդիր, պատարագս մատուցանեմ > պատարագամատուց):

Գոյական + բայ > ածական կաղապարով առաջացած որոշ կազմություններ բառական արժեք են ստանում – ու ածանցով, ինչպես՝ ահ արկանել > ահարկու, զբանս արկանել > բանսարկու, յանծն առնեմ > յանծնառու, աւար առնեմ > աւարառու և այլն:

Փոխակերպական այս իրողության ուսումնասիրությունը կարևորվում է հայերենի պատմական բառագիտության առումով:

Բանալի բառեր՝ փոխակերպում, սերիչ կաղապար, փոխակերպման կաղապար, բարդություն, նախդրավոր կառույց, վերլուծականություն, համադրականություն:

Ներածություն

Լեզվի տարժամանակյա դիտվածքում որոշակի գործոններով պայմանավորված՝ նրա կառուցվածքային մակարդակներում տեղի են ունենում որոշակի փոփոխություններ, որոնք կարող են նաև բառակազմական մակարդակում տիպաբանական չափորոշիչներ դառնալ, երբ վերլուծական կառուցատիպի լեզվական միավորներն անցնում են համադրականության: Այդպես հին հայերենի մի շարք վերլուծական ձևեր արդի հայերենում դիտվում են համադրական կառուցատիպի բառեր: Այդ կարգի փոփոխություններն ազդել են նաև բառակազմական մակարդակի վրա՝ առաջ բերելով մասնիկավոր-համադրական կազմություններ: Դրանք պայմանավորված են լեզվական միավորների փոխակերպման (փոխկաղապարման) գործոնով: Փոխակերպման գործընթացի ուսումնասիրությունը բացահայտում է սերման որոշակի կաղապարներ, որոնք վերացարկված մտածողության տարբեր աստիճանների դրսևորումներ են: Լեզվի փիլիսոփայության տեսանկյունից՝ սերման կաղապարներ են համարվում միջուկային նախադասություններն ու բառակապակցությունները, որոնցից սերում են բաղադրյալ բառերի կաղապարները՝ որպես արդյունք նախադասություն – բառակապակցություն փոխակերպական գործընթացի¹:

Լեզվի տարժամանակյա կտրվածքում վերլուծականությունից համադրականության անցումն ուղեկցվում է տարբեր կաղապարներով, որոնց մեջ զգալի կշիռ ունի *գոյական + բայ կաղապարը*: Այդ կաղապարով առաջացած բարդությունները սերում են հին հայերենի անվանաբայական հարադրություններից²:

Գոյական + բայ > ածական կաղապարով առաջացած բարդություններն արդի հայերենում ունեն ածականի խոսքիմասային արժեք, որ պայմանավորված է բարդության երկրորդ բաղադրիչի՝ բայահիմքի արտահայտած հատկանշային իմաստով: Որոշակի բարդություններ, ածականական արժեքին զուգահեռ, արտահայտում են նաև գոյականի խոսքիմասային նշանակություն՝ ցուցաբերելով խոսքիմասային տարարժեքություն: Այդ կաղապարով առաջացած բարդությունները կարելի է քննել երկու հայեցակետով՝ առանձնացնելով բարդություններ, որոնց կաղապարը եզրափակվում է *բայահիմքով*, և բարդություններ, որոնց կաղապարը եզրափակվում է *ածանցով*³:

¹ Զահուկյան 1973, 565:

² Աբեղյան 1965, 204:

³ Հին հայերենի բարդության և ածանցման կաղապարների մասին տե՛ս Հովսեփյան 1987: Արդի հայերենի բառակազմական կաղապարների մասին տե՛ս Խաչատրյան 2011:

Ա. Բայահիմքով եզրափակվող կաղապարներ

Այս կարգի բարդությունների երկրորդ բաղադրիչ է դառնում բայահիմքը (առաջին կամ երկրորդ):

1) Բայի առաջին հիմքը որպես բարդության բաղադրիչ

Բայաբաղադրիչներով բարդությունների սերման կաղապարների վերաբերյալ Գ. Զահուկյանը նշում է, որ հաճախ դժվար է սահման դնել այս տիպի բարդ հիմքերի և բայական հիմքերով կազմված գոյականներից ու ածականներից երկրորդաբար կազմված բայերի միջև. այսպես, *ահաբեկ*-ը կարող է մեկնաբանվել կա՛մ որպես *ահաբեկ* ածականի բայացված ձև, կա՛մ դիտվել որպես *ահով բեկ-ել* բառակապակցությունից ստացված բարդություն. այսպիսի դեպքերում հարկավոր է ստուգել, թե արդյոք բարդ հիմքը անկախ չի՞ գործածվում որպես ածական կամ գոյական: Այնուհետև *գոյական + բայ > բայ* կաղապարով սերած բարդությունների շարքում դիտարկվում են՝ *ալիքներով կոծել > ալեկոծել, անդամները հալել > անդամահալել, արդյունքը հանել > արդյունահանել, արծաթով պալել > արծաթապալել, ոսկով (լուծոյթով) ջրել > ոսկեջրել, ոսկով (զ)օծել > ոսկեզօծել, ահով զանգել > ահազանգել, ասեղ(ներ)ով գործել > ասեղնագործել, նկար(ներ)ով զարդարել > նկարազարդել, ական(ներ)ով պալել > ականապալել* և այլ փոխակերպումները⁴:

Հինհայերենյան հարադրությունների փոխակերպման գործընթացում բայական բաղադրիչը, որպես սերող հիմք, բարդության արտահայտության պլանում հանդես է գալիս առաջին (անորոշի) հիմքով: Դիտարկենք հետևյալ օրինակները:

Վրէժ խնդրել հարադրությունը հին հայերենում նշանակում է «ոճիրի՝ չարիքի՝ հանցանքի դիմաց վրէժ լուծել՝ փնտրել. քինախնդիր լինել»: Հմմտ. *Մի խնդրեսցէ վրէժ ձեռն քո և ընդ որդւոց ժողովրդեան քո ռիս մի ունիցիս* (Ղեստ, ԺԹ, 18): Որպէս պատմեցի նմա եթէ *խնդրեսցից վրէժ* ի տանէ նորա մինչև յաւիտեան (Ա Թագ., Գ, 13):

Այդ նույն հարադրությունից հին հայերենում ունենք համադրական՝ *վրէժխնդիր*⁵ կազմությունը՝ «վրիժառու, քինախնդիր» իմաստով, ինչպես՝ Աստուած՝ *վրէժխնդիր* Տէր, Աստուած *վրէժխնդիր* յայտնեցար (Սաղմ., ՂԳ, 1): *Վրէժխնդիր* է Տէր բարկութեամբ. և խնդրէ Տէր վրէժ ի հակառակորդաց իւրոց (Նաում, Ա, 1):

⁴ Զահուկյան 1989, 223:

⁵ Համադրական այդ ձևը *լինել* բայի հետ կազմում է հարադրություն. Եւ աջողեցաւ գործն ի ձեռս նոցա՝ *վրէժխնդիր լինել* ի ձեռացն հեթանոսաց (Ա Մակ., Բ, 48): Մի՞թե արդյոք պարզ չէ և քեզ համար, Որ կարող է սերը... *վրէժխնդիր լինել* (ՊՍ, Գ, 121):

Հինհայերենյան համադրական կազմությունը (վրեժխնդիր) փոխանցվել է ժամանակակից հայերենին և գործածվում է նախկին իմաստներով. հմմտ. Զարկի՛ր ու շանթի՛ր, եթե աստված ես Դու *վրեժխնդիր* (ՀԹ, 1, 63): Իսկ գազանները ...Իսկ գազանները Արարչին սուրբ անվան համար *վրեժխնդիր*՝ լուսինն ի վեր երկար-երկար ոռնացին (ԴՎ, ԺՀԼԲԲ):

Խնդրել բայական բաղադրիչով հին հայերենում ունենք նաև *քէն խնդրել* հարադրությունը՝ «վրեժխնդիր լինել, վրեժ լուծել» իմաստներով, ինչպես՝ Թագաւորեաց Պարսից Վռամ երկրորդ, և *զքէն* վրիժուց *խնդրեաց* ի մերմէ աշխարհէս (Խոր., 333): Արշակ... տայ պատերազմ ընդ նախարարսն ընդ այնոսիկ՝ *խնդրելով զքէն* ձեռակերտին իւրոյ Արշակաւանու (Խոր., 291):

Հարադրության բաղադրիչների ծուլման ճանապարհով հին հայերենում ունենք *քինախնդիր* համադրական կազմությունը՝ «վրիժառու, վրեժխնդիր» իմաստներով, հմմտ. Արք նախանձայոյզք *քինախնդիրք* պահեն զկանայս իւրեանց (ՆՀԲ, 2, 1006):

Քինախնդիր համադրական բարդությունը, որպես անվանական բաղադրիչ, հանդես է գալիս *քինախնդիր լինել* անվանաբայական հարադրության կազմում՝ *քէն խնդրել* հարադրության իմաստով, ինչպես՝ Փոխանական զի *քինախնդիր եղև* Աստուծոյ իւրում (Թուոց, ԻԵ, 13): Բայց վասն զի *քինախնդիր* անցելոցն մարտից կամեցաւ *լինել* Շապուհ՝ ինքն ելանէ պատերազմել ընդ Յոյնս (Խոր., 286):

Արդի հայերենում գործածական է *քինախնդիր* համադրական բարդությունը՝ «քենը՝ վրեժը լուծելու համար միջոցներ փնտրող, վրեժխնդիր» իմաստներով, ինչպես՝ Ի՞նչ է սա, հիմարությո՞ւն, թե *քինախնդիր* կիրք. իր թագավորից դժգոհ՝ վրեժխնդիր է լինում իր երկրից և կռիվ հայտարարում նրան (ՍԶ, ԺՀԼԲԲ):

Հին հայերենում պաշտել զօրէնս ազատ կապակցությունը նշանակում է «ծառայել օրենքին՝ օրինականությանը, հարգել օրենքը», ինչպես՝ Եւ հաճեաց զմիտս նորա, եւ նախ ուրացաւ նա ի կենաց իւրոց, եւ յանձն առ պաշտել զօրէնս մոգութեանն (Բուզ., 136): Եթէ իցէ՝ յանձն առցէ պաշտել զօրէնս մոգութեանն, ոչ մեռցի (Բուզ., 148): Նոցա կալեալ զտիկինն Ռշտունեաց զկին Գարեգնի զքոյր Վարդանայ Մամիկոնէի ածեալ ի Վանտոսպ ի քաղաքն Շամիրամայ, մատնեն ի խոշտանգանս եւ ի տանջանս դառնագոյնս. ստիպեն լքանել թողուլ կրօնս քրիստոնէութեան, հնազանդել պաշտել զօրէնս մազդեզական մոխրապաշտութեանն (Թովմա Արծրունի):

Հինհայերենյան հարադրությունից արդի հայերենում ունենք *օրինապաշտ* համադրական բարդությունը՝ «օրենքի պահպանմանը խստիվ հետևող, չափազանց օրինապահանջ» հատկանշային իմաստներով, ինչպես՝ Հայոց եկեղեցու *օրինապաշտ* զավակները պարտավոր են հետևել «Վարք սրբոցի» պատվիրաններին (Մամուլ):

Հին հայերենում *դրժել զուխսն* ազատ կապակցությունը նշանակում է «երդումը՝ ուխտը՝ խոստումը զանց առնել. խոստումը՝ ուխտը չպահել», հմմտ. *Դրժել կենակցին և ծանօթին կամ ուխսրին դաշանց* (ՆՀԲ, 1, 643):

Հին հայերենում ազատ կապակցության բաղադրիչների ծովման ճանապարհով ունենք *ուխսրադրուժ* համադրական կազմությունը՝ ածականի հատկանշային՝ «երդումը՝ ուխտը՝ խոստումը չկատարող. խոստումը՝ ուխտը չպահող» իմաստներով, ինչպես՝ Ետես զցոփութին նորա *ուխսրադրուժն* Յուդա (Երեմ., 9, 7): Իսկ ողորմելի *ուխսրադրուժն* Վասակ թեպէտ եւ կամէր խօսել ինչ (Փարպ., 85):

Արդի հայերենում գործածվում է հինհայերենյան *ուխսրադրուժ* համադրական կազմությունը՝ նախնական իմաստով, ինչպես՝ Եթե չհաշտվես, աշխարհը քեզ պիտի դատապարտե իբրև *ուխսրադրուժ* (Մուր., ԺՀԼԲԲ):

Հին հայերենում գուշակել աստեղքը ազատ կապակցությունը նշանակում է «աստղերով գուշակել, ինչպես՝ Ուր իցէ գուշակումն աստեղը (ՆՀԲ, 1, 320): Բայց ճշմարտեն ոմանք երկու ամաւ յառաջ գուշակեալ աս տեղը եւ յուղի անկեալ եկեալ ժամանեցին ի (տեղի) ծննդեանն, միով աւուրբ զկնի ծննդեանն, ըստ որում գտին պատեալ ի խանձարուրս եւ եղեալ ի մսուր (Միքայել Ասորի. Ժամանակագրութիւն):

Հին հայերենում հարադրական կազմությունից ունենք *աստղագուշակ* համադրական բարդությունը՝ «որտեղ հնարավոր է գուշակել աստղով» իմաստով, ինչպես՝ *Աստղագուշակ* տեսլեամբն յայրին իջևանի (ՆՀԲ, 1, 320):

Արդի հայերենում *աստղագուշակ* բարդությունը՝ «աստղահմա, աստղերով գուշակություն անող անձ» իմաստով գործածվում է ած. // գոյ. խոսքիմասային տարարժեք նշանակություններով: Հմմտ. Միջնադարում *աստղագուշակները* կարողանում էին տնօրինել հասարակ մահկանացուների ճակատագրերը (Մամուլ):

Հին հայերենում *պահեն զօրէնս* ազատ կապակցությունը նշանակում է «օրենքը պահել, պատվիրանին հավատարիմ մնալ», ինչպես՝ Վասն այնորիկ ողջանդամք եւ առանց խոցոտելոյ ի պատերազմէ ելանեն, զի հաստատութեամբ ուրեմն *պահեն զօրէնս*, որ ի նմանէ կալեալ է (Բ Մակ., է, 36): Իսկ որ *պահէ զօրէնս*՝ խորհրդոց իւրոց հասու լինի (Սիրաք, ԻԱ, 12): Ապա ժամանակաւ ձգեալ ամպարիշտ սովորութիւնն իբրեւ *զօրէնս պահեցաւ* (Իմաստ., ԺԴ, 16):

Գրաբարի մակարդակում ունենք *օրինապահ* համադրական բարդությունը՝ բայսահմանի՝ ենթակայական դերբայի նշանակությամբ՝ «օրենքը պահող, պատվիրանին հավատարիմ մնացող», ինչպես՝ Յանկալի եղեալ *օրինապահ* ընկալելովքն (Ագաթ., 453): Աստուածասէր թագաւորն *օրինապահ* կալով (ՆՀԲ, 2, 1035):

Արդի հայերենում գործածվում է *օրինապահ* համադրական բարդությունը՝ «օրենքի պատվերները պահող, օրենքի համաձայն ապրող՝ գործող»

կարգապահ», ինչպես՝ Հիմնական թաղականներն այնչափ *օրինապահ* են, ընդհանուր դատախազի դրությունն կառավարութենեն ընդունվելեն (հաստատվելեն) ի վեր (ՀՊ, ԺՀԼԲԲ): Որ ...թերևս հաղթահարվեր, թե... չլինեինք այսքան *օրինապահ* (ՊՍ, Բ, 157):

2) Բայի երկրորդ հիմքը որպես բարդության բաղադրիչ

Հինհայերենյան որոշ հարադրությունների բայական բաղադրիչը, որպես սերող հիմք, համաձին բարդություններում հանդես է գալիս երկրորդ (կատարյալի) հիմքով: Դիտարկենք հետևյալ օրինակները:

Պատարագս մատուցանեմ հարադրությունը հին հայերենում նշանակում է «պատարագի ծես կատարել», հմմտ. Այր ոք ի ձենջ եթէ *մատուցանիցէ պատարագ* Տեառն (Ղեստ., Ա, 2): Յորում *մատուցանիցէք պատարագս* Աստուծոյ ձերոյ (Ղեստ., ԻԴ, 14): Զի *մատուցէ պատարագս* և զոհս մեղաց (Եբր., Ե, 1):

Բաղադրիչների ծուլման ճանապարհով հին հայերենում ունենք *պատարագամատույց* համադրական բարդությունը՝ ածականի և գոյականի խոսքի մասային արժեքներով. բայահիմքը բնորոշվում է ենթակայական դերբայի նշանակությամբ:

Հմմտ. 1. ա.գ. - «Պատարագ մատուցող». Նոքա եղիցին *պատարագամատույցք* փոխանակ ժողովրդեանն (ՆՀԲ, 2, 606): 2. ա. «Պատարագի մատուցմանը վերաբերող». Քննեցի վասն սորին *զպատարագամատույց* աղօթս (ՆՀԲ, 2, 606):

Ժամանակակից հայերենում, որպես համադրական բարդություն, այն ձեռք է բերել նոր իմաստ և անկախացել է առարկայական նշանակությամբ՝ «պատարագ մատուցելու ժամանակ ասվող աղոթքներն ամփոփող գիրք, խորհրդատետր»⁶:

Հին հայերենում *աղօթս առնեմ* հարադրությունը նշանակում է «աղոթել», ինչպես՝ Մեծաւ յուսով *աղօթս առնէին* (Եղ., 49): *Աղօթս արարեալ* ի վերայ նորա, վերստին ընկալան զնա յառաքինութիւն (Եղ., 64):

Հին հայերենի *առնեմ* անկանոն բայի երկրորդ հիմքով՝ *արար*, ստեղծվել է *աղօթարար* համադրական կազմությունը⁷, որ արդի հայերենում գործածվում է իմաստի ընդլայնմամբ՝ գոյական // ածական նշանակություններով, ինչպես՝ «աղոթք անող՝ մատուցող. ուխտավոր. աղոթական»: Հմմտ. Ապա սրբազան նվերներ տարան այն *աղոթարար* միաբաններին (ՀԹ, 2, 22): Ծնրադրել է խավարը խոժոռ՝ *Աղոթարարի* ջերմեռանդությամբ (ՊՍ, Դ, 209):

⁶ Որպես հնաբանություն՝ գործածվում է նաև «պատարագ մատուցող քահանա» իմաստով:

⁷ ՆՀԲ վկայում է *Աղօթարար* բառահոդվածը, սակայն ելնելով նրա բերած բնագրային վկայություններից (Ն. Շնորհալի, Ոսկիփորիկ, Հովի. Երզնկացի, Կ. Գանձակեցի և այլն), պետք է կարծել, որ համադրական այդ կազմությունը ժամանակագրորեն ձևավորվել է հին հայերենի գոյավիճակից դուրս:

Հին հայերենում *հեղուլ զարին* ազատ կապակցությունը նշանակում է «արյուն կամ արյունը թափել՝ հանել», ինչպես՝ Զամենայն *զարին հեղցէ* առ յատակաւ սեղանոյն (Ղեւտ., Դ, 18): Զի ոտք նոցա ի չարիս ընթանան, եւ երագունք են ի *հեղուլ զարին* (Առակ, Ա, 16)⁸:

Այժմ ունենք *արյունահեղ* համադրական բարդությունը՝ հատկանշային իմաստի ընդլայնմամբ՝ «արյուն թափող, մարդասպան. արյունալի, արյունոտ»: Հմմտ. Ու պիտի խառնեն դարձյալ ու կրկին *Արյունահեղի...* ըմպելիք սուրճին (ՊՍ, Դ, 307):

Օրէնք անվանական բաղադրիչը *դնել* անորոշ դերբայի հետ հին հայերենում կազմում է անվանաբայական հարադրություն՝ *օրէնս դնել*՝ «օրենքով կարգ ու կանոն սահմանել, որևէ օրենքով կանոնակարգել» իմաստներով, ինչպես՝ Զօրինութիւնս տացէ, որ *զօրէնս դնէ* (Սաղմ., 83, 7): Թէ բնութեամբ իցեն չարիքն՝ ոչ պարտի օրէնսդիրն *օրէնս դնել* (Եզն., 59)⁹:

Հին հայերենում ունենք *օրենսդիր* համադրական կազմությունը, որի սերիչ կաղապար է դարձել անվանաբայական հարադրությունը: Համադրական բարդությունն ունի «աստծո օրենքների տեր. մարդ, որ օրենքներ է սահմանում իր անձնական գործով և խոսքով» իմաստներ: Ինչպես՝ Կացո՛, Տէ՛ր, *օրէնսդիր* ի վերայ նոցա (Սաղմ., Թ, 21): Մի է *օրէնսդիր* և դատաւոր, որ կարող է փրկել և կորուսանել (Յակո., Դ, 12):

Ժամանակակից հայերենում գործածական է *օրենսդիր* համադրական բարդությունը՝ «օրենքներ դնող անձ կամ մարմին՝ ժողով» իմաստով, ինչպես՝ Եվ այն օրվանից հայտնի դարձավ, որ Համմուրաբին աշխարհի առաջին *օրենսդիրն* էր (Լեո): Դիցուք, թե նաև դառնում եմ մի օր՝ բանաստեղծության *օրենսդիր* մի նոր (ՊՍ, Ա, 415):

Հին հայերենում *անցանել զօրէնս* ազատ կապակցությունը նշանակում է «օրենքից անցնել, օրենքն անտեսել, ինչպես՝ Իսկ անօրէնութիւն՝ հոգւոյն է. զի օրէնքն հոգեւոր են: Իսկ յանցումն մտաց տեսութեան: Երկրորդ՝ յանցանք է կոխել *զօրէնս* եւ *անցանել* (Գր. Տաթևացի, Աստվածաբանութիւն):

Եւ արդ, եղբայ՛ր, ե՛կ եւ ուսի՛ր յինէն զճշմարտութիւնն. եթէ ըստ կարգի զամենայն մեղս խտրէիր, որպէս եւ հրաման ընկալայ, բարիոք էր եւ զայս խտրութիւն ներքոյ իւրումն սահմանի պահել, եւ ոչ գեր *օրինացն անցանել* (Ն. Լամբրոնացի, Աստվածաբանութիւն):

Հին հայերենում բաղադրիչների ձուլման ճանապարհով առաջացել է *օրինազանց* համադրական բարդությունը՝ «օրենքի դեմ հանցանք գործող»:

⁸ Գրիգոր Վրդպ. Կամախացու երկում հադիպում է հինհայերենյան հարադրական կառույցը. Որպէս ոք ջուր հեղու, այնպէս երագ են ի *հեղուլ զարին* մարդոց. այնպիսիքն կոապանանեն զբազումս ի նոցանէ:

⁹ Հին հայերենում ունենք նաև համադրական՝ *օրէնսդրել* և *օրինադրել* կազմությունները՝ «օրենքով կարգել՝ սահմանել. կանոնարկել» իմաստով, հմմտ. Արտաքոյ քաղաքի կամեցաւ *օրէնսդրել* (ՆՀԲ, 2, 1031): Զգուշացիր յոյժ առնել ըստ ամենայնի՝ որպէս *օրինադրեսցի* քեզ (Բ Օրին., ԺԷ, 10):

օրինախախտ» նշանակություններով, ինչպես՝ Մեղս գործէք՝ յանդիմանեալք յօրինացն իբրեւ *օրինազանցք* (Յակո., Բ, 9):

Արդի հայերենում գործածվում է *օրինազանց* համադրական կազմությունը՝ «օրենքը զանց առնող՝ արհամարհող՝ բանի տեղ չդնող» իմաստով, ինչպես՝ Ճանապարհների փոշիների մեջ Դնում են կնիք նախարարական, Մի կնիք, Որին հաշվի չի առնում լոկ *օրինազանց* քրեագործ քամին (ՊՍ, Ա, 492):

Հին հայերենում *ուխար դնել* հարադրությունը նշանակում է «հավատարմության երդում տալ, դաշինք կոել՝ կապել (մեկի հետ)», ինչպես՝ *Ուխար* զայս *դնէր* ընդ ամենայն մարդոյ (Ագաթ., 448): Եւ զո՞ր *ուխար եղ* ընդ հարս նոցա յերկրի Եգիպտացոց, եթէ ոչ զարին գառինն ի պապայի, այսինքն ի զատկին (Ղեւ., 83):

Հին հայերենում հարադրության բաղադրիչների ծուլման ճանապարհով ունենք *ուխարադիր* համադրական կազմությունը՝ «ուխտակից, ուխտավոր, ուխտ կապող» իմաստներով, ինչպես՝ Են մեզ արք չորք *ուխարադիրք* յանձինս իւրեանց (Գործ., ԺԱ, 23): Յերկիրս յոր *ուխարադիր լինիցի* ոգւովք իւրեանց (Եր., ԻԲ, 27): *Ուխարադիր* էր ընդ թագաւորին Վրաց (Փարպ., 133):

Հին հայերենում *անցանել զուխար* //– *ուխարի* // – *ըստ ուխար* ազատ կապակցությունները նշանակում են «ուխտը՝ երդումը՝ խոստումը դրժել. երդմնազանց լինել», ինչպես՝ Մեղաւ ժողովուրդն, եւ *անց զուխարի* իմով, զոր ուխտեցի նոցա (Յեսու, Է, 11): Եւ որ յանդիմանեցի ի նզովսն, այրեցի ինքն հրով եւ ամենայն տուն իւր, զի *անց ուխարի* Տեառն (Յեսու, Է, 15): Եթէ իցէ ապրեցի՞ որ առնէ իրս հակառակս, եւ *անցանէ* ըստ *ուխար* (Եզեկ., ԺԱ, 15): Պնդասրտեալ յաւժարագոյնս եւս առնէր զնոսա, զհեթանոսացն եւս ստոյթինս ի մէջ բերելով, եւ *զուխարիցն անցանել* եւ զերդմանցն անարգել (Բ Մակ., ԺԵ, 10):

Հին հայերենի մակարդակում հարադրության բաղադրիչների ծուլման ճանապարհով ունենք *ուխարազանց* համադրական կազմությունը՝ հատկանշային (ածականական) նշանակությամբ՝ «ուխտը՝ երդումը՝ խոստումը դրժող. երդմնազանց»: Հմմտ. Եւ *ուխարազանց* եղեն յԱստուծոյ հարցն իւրեանց (Ա Մակ., Ե, 25): Եւ որ ոք հեռացեալ յուխտէ երդմանցս այսոցիկ ցուցցի *ուխարազանց...* ելցէ նա արտաքս ընդ Յուդայի (Փարպ., 62):

Արդի հայերենում գործածական է *ուխարազանց* համադրական կազմությունը՝ որպես հինհայերենյան ժառանգություն՝ նախնական իմաստով, ինչպես՝

Նա (Վասակ Մամիկոնյանը) յուր բոլոր վեհությամբ կանգնած էր Շապուհի ատյանում և հանդիմանում էր *ուխարազանց* թագավորի խաբեությունը (Բ, ԺԼԲԲ):

Հին հայերենում *դամ տեղեկութիւն* ազատ կապակցությունը նշանակում է «տեղեկացնել, տեղեկություն հաղորդել», ինչպես՝ Եւ հասեալ ի վերայ հրամացն Կիւրոսի թագաւորի, առ մեզ *տեղեկութիւն տացես* վասն իրացս այսր ամենայնի (Ա Եզր., Զ, 22): Սկսաւ խօսել և *դաւ տեղեկութիւն* (Ագաթ., 70):

Ժամանակակից հայերենում ունենք *տեղեկատու* համադրական կազմությունը՝ *տամ* բայի երկրորդ հիմքով (տու)՝ «տեղեկություններ տվող՝ հաղորդող (անձ կամ հիմնարկ), զանազան հարցերի վերաբերյալ տեղեկություններ պարունակող (գիրք)» հատկանշային իմաստներով, ինչպես՝ Ինք պահ մը մտածած էր թե՛ գուցե Փարթամ պեյն էր *տեղեկատուն*, բայց հիմա կը տեսնար, որ ան գործին մեջ բնավ մասնակցություն չէր ունեցած (ԵՕ, ԺՀԼԲԲ): *Տեղեկատու* գրքույկ (Մամուլ):

Հին հայերենում *տամ* *իրատունս* ազատ կապակցությունը նշանակում է «արդարացնել, արդարացի պատճառ վկայել», ինչպես՝ Ուսարուք զբարիս գործել. դատ արարէք որբոյն և *տուք* *իրատունս* այրոյն (Եսայ. Ա, 17): Զսիրտ ամպարշտի ոչ կենդանացուցէ, եւ *իրատունս տացէ* աղքատի (Յովք, ԼԶ, 6):

Արդի հայերենում ունենք *իրավատու* համադրական կազմությունը (*տամ* բայի երկրորդ՝ *տու* հիմքով), որ իմաստային տարբերակում է ցուցաբերում հինհայերենյան իմաստի նկատմամբ, ինչպես՝ «իրավունքը ուրիշին հանձնող՝ զիջող» նշանակությամբ: Հմմտ. Արյունակցական կապեր ունեցող անձինք կարող են *իրավատու* լինել միմյանց նկատմամբ (Մամուլ):

Հին հայերենում *գրել* բայը *գրիչ* բառի գործիականով խնդրառությամբ կազմում է *գրել գրչաւ* կապակցությունը, որ նշանակում է «գրիչով գրել՝ փորագրել՝ նախշազարդել», ինչպես՝ *Գրեաց գրչաւ* քերթս և արմաւենիս (ԳԹագ., Զ, 29):

Բաղադրիչների ծուլման եղանակով հին հայերենում առաջացել է *գրչա-գիր* համադրական կազմությունը՝ ածականի խոսքիմասային արժեքով, հմմտ.

Ոչ է միապէս ամենայն սաղմոսարան. որպէս յայտ է երկաթագիրս և ի *գրչագիրսն*, և յայլ միջակսն (ՆՀԲ, Ա, 588):

Արդի հայերենում համադրական այդ կազմությունը գործածվում է խոսքիմասային երկարժեք նշանակություններով, ինչպես՝ 1. «գրչով գրած՝ գրված, ձեռագիր» (ած.), հմմտ. Նա կտրեց մի հին *գրչագիր* գրքի կազմից մի թերթ մագաղաթ և ուղարկեց (Բ, ԺՀԼԲԲ): 2. «Հին ձեռագիր գիրք» (գոյ.), հմմտ. Նա այստեղ տեսավ հազիվ երկու հարյուրի չափ հին ու նոր հատորներ, որոնց մի մասը ոչ շատ կարևոր *գրչագրեր* էին (Մուր., ԺՀԼԲԲ):

Բ. Ածանցով եզրափակվող կաղապարներ

Հին հայերենում կան գոյ. + բայ > ած. կաղապարով առաջացած որոշ կազմություններ, որոնք բառական արժեք են ստանում –ու ածանցով: Նման բաղադրություններն առանց ածանցի գոյություն չունեն. դրանց սերող հիմք են դառնում գոյ.+բայ կառուցատիպերը, որոնց բայական բաղադրիչի հիմքը եզրափակվում է ածանցով:

Օրինակ, եթե դիտարկում ենք *ահ արկանել* հարադրությունից առաջացած *ահարկու* կազմությունը, պետք է նկատի ունենալ, որ լեզվում *ահարկ* ձև գոյություն չունի, ինչպես նաև լեզվում չկա *արկու* ձևը, ուստի կարելի է

ասել, որ ահարկ-ը կախյալ հիմք է, որ բառակազմական մակարդակում դառնում է սերող հիմք: Դիտարկենք այդ կաղապարով առաջացած որոշ բաղադրությունների վերլուծական և համադրական կառուցատիպերի արտահայտության և բովանդակության պլանների հարաբերակցությունը լեզվի տարժամանակյա կտրվածքներում:

Հին հայերենում աւար առնում հարադրությունը նշանակում է «ավերել, հափշտակել, կողոպտել, ինչպես՝ Իսկ արքայ Կոստանդին իբրեւ զայն լուսա՝ կամեցաւ առնուլ աւար զգաւրացն բազմութեան, եւ երթալ ձմերել ի Հայս, զի բարձցէ զերկիրն ի միջոյ (Սեբեոս):

Բայց Աղուանն եւ Սինին եւ գունդն Սեպիական ոչ հնազանդեցան, զորոց զերկիրն աւար առեալ տարան զինչ եւ գտին, եւ դարձան անդրէն առ արքայ (Սեբեոս):

Հարադրության բաղադրիչների ծուլման ճանապարհով հինգերորդ դարում ունենք *աւարառու* համադրական բաղադրությունը՝ «ավերող, թալանող» և «թալանը՝ ավարը բաշխող՝ բաժանող» նշանակություններով, ինչպես՝ Այս է բաժին *աւարառուաց* ձերոց, եւ ժառանգութիւն, որ զձեզն ժառանգէին (Եսայ., ԺԷ, 14):

Բարձեալ զգէն եւ զասպազէն առնեւծիոյ զօրացն այլազգեաց անչափ բազմութեամբ, եւ ի բազում աւարառուաց իւրոցն զօրաց ոչ ինչ տուժէ արքայ յումեքէ, այլ հրամայէ հանդէպ երեսաց տանել զինչ եւ շահեցաւ (Թ. Արծրունի)¹⁰:

Արդի հայերենում գործածվում է հինհայերենյան համադրական բաղադրությունը՝ «ավարի ենթարկող, կողոպտիչ, հափշտակող» գոյ./ած. տարարժեք նշանակություններով, ինչպես՝ *Ավարառու* աչքից լքված, Մի աղքատ մարդ... Պառկեց հանդարտ, Սիրտը՝ անդորր (ԱԻ, 2, 179): Նա նկատեց այրվող խրճիթի մոտ մի քանի իրեղեններ, որոնք, *ավարառուն*, անձեռնհաս լինելով, թողել էր այնտեղ (Բ, ԺՀԲԲ):

Հին հայերենում *ահ արկանել* նշանակում է «վախ՝ երկյուղ գցել (մեկի վրա)», ինչպես՝ Նստէր յատենի *ահ արկանելով* սրբոցն (Եղ., 177): Զի մի թուեցայց իբրեւ *ահ* ինչ *արկանել* ձեզ թղթովքս (Բ Կորն., Ժ, 9):

Հին հայերենում ունենք –ու ածանցով *ահարկու* բառը՝ հատկանշային (ածականական) նշանակությամբ՝ «ահավոր, ահընկեց, սարսափազդու. պատկառելի»: Հմմտ. Այր հանճարեղ և *ահարկու* տեսողացն զնա (Յհ. Կթ., 326): Կրկին պատուեաց մաքրական տաժմամբ՝ *Ահարկու* դիաց և ամենայն չար պատահարաց (Նար., 247): *Ահարկու* հրամանն եւ մերկապարանոց յանդիմանութիւնքն (Նար., 19)¹¹:

¹⁰ Եւ *առցեն յաւարի զաւարառուս* իրեանց եւ կողոպտեսցեն զկողոպտիչս իրեանց (Եզեկ., ԼԹ, 10):

¹¹ Հին հայերենում *ահ արկանել* հարադրությունից ունենք համադրական բայական բառույթ՝ *ահարկեմ*՝ «վախ ներշնչել, սարսափեցնել» իմաստներով: Հմմտ. Մարգարէիցն... *ահարկեալ* փրկել կարասցեն զնոսա (Ագաթ., 281):

Արդի հայերենում *ահարկու* բաղադրությունն ունի հատկանշային՝ ած./ մկբ. նշանակություն. «ահեղ, ահռելի, զարհուրելի», «ահագղու կերպով, ահավորությամբ», ինչպես՝ Մենք միշտ առաջ պիտ գնանք, Ինչքան մեր ճամբան լինի *ահարկու* (ՀԹ, 1, 36): Բայց այդ միջոցին *Ահարկու* մի ցին Լսեց աքլորի կանչը սնապարծ (ԱԻ, 2, 184):

Հին հայերենում *զբանս արկանել* հարադրությունը նշանակում է «(չա-րության) խոսք գցել, չարախոսել, զրպարտել, մատնել, բամբասել»¹², ինչ-պես՝ Զնա ի բանս արկանէր Փառանձեմն անօրէնն (Բուգ., 104): Զի բանս արկցէ ընդ թագաւորին Պարսից ընդ Շապուհ և ընդ Արշակ (Բուգ., 113):

Հին հայերենում ունենք –ու ածանցով *բանսարկու* կազմությունը՝ «բամբասող, չարախոս, խառնակիչ, զրպարտիչ, մատնիչ» իմաստներով: Հմմտ. Կրակարանք կայծականաց եւ փայտ հրոյ եւ այր բանսարկու առ ի յուզել զկոհի (Առակ, ԻԶ, 21): Իբրեւ լսէր զբանս անաւրէն բանսարկոյին... հրաման ետ թագաւորն հրովարտակս տալ (Բ Մակ., ԺԶ, 27): Արդ ոչ է առն բանսարկուի արժան ի տան թագաւորի լինել (Եսթ., Է, 4): Մի՛ սիրեր լինել բանսարկու, և լեզուաւ մի՛ գայթակղեր (Սիրաք, Ե, 16)¹³:

Արդի հայերենում գործածական է համադրական (ածանցավոր) կազմությունը՝ բանսարկու՝ ած. // գոյ. տարարժեք նշանակությամբ՝ «քսու, չարախոս, զրպարտիչ. խառնակիչ» իմաստներով: Հմմտ. *Բանսարկուն* երկու ցուցամատները կցեց միմյանց հետ, որ միության նշան էր (Բ, ԺՀԼԲԲ): Նրա վրա հավասար ազդեցություն ունեին թե՛ մեծը և թե՛ փոքրը... թե՛ խարդախ *բանսարկուն* և թե՛ իմաստուն խորհրդականը (Մուր., ԺՀԼԲԲ):

Այսպիսով, դիտարկված հինհայերենյան անվանաբայական կապակցությունների և նրանց համարժեք արդիհայերենյան համադրական կառուցատիպերի զուգադրական քննությունը ցույց է տալիս, որ լեզվի տար-ժամանակյա կտրվածքում տեղի է ունեցել լեզվական միավորների փոխա-կերպման գործընթաց, որի հետևանքով լեզվական այդ նույն միավորները, պահպանելով բովանդակության պլանները, ենթարկվել են արտահայտու-թյան պլանի փոփոխության՝ վերլուծականությունից անցնելով համադրա-կան կառուցատիպերի:

Եզրակացություններ

Հայերենի բառային կազմի տարժամանակյա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հին հայերեն – ժամանակակից հայերեն ժամանակահատ-

¹² Հին հայերենում *զբանս արկանել* հարադրությունից ունենք համադրական բայական բառույթ՝ *բանսարկեմ*՝ հարադրության իմաստով, ինչպես՝ Ոչ բանսարկիս ի բարութեանց (Նար., 207):

¹³ Մատենագրական որոշ երկերում հանդիպում է բաղադրիչների անջատ գրությամբ, հմմտ. Զի դուռն կենաց իմաստութեանն բաց է. եւ հակառակորդք բազում են գործակցաւ բանս արկոյին, որ որսայն զորդիս մարդկան ի կորուստ (Գր. Լուսատրիչ): Որպես եւ այրս այս արար, անքակ եւ անմեկ-նելի զգեցաւ պատեանս յինքեան զգորութիւն բանս արկոյին (Թ. Արծրունի):

վաճում հինհայերենյան որոշակի հարադրություններ ներկայանում են համադրական կառուցատիպերով: Այդ կարգի հարադրությունները հին հայերենում անվանաբայական կառույցներ են, որոնք բարդությունների են փոխակերպվել գոյական + բայ > ածական կաղապարով: Բարդությունների ածականական արժեքը պայմանավորված է նրանց երկրորդ բաղադրիչի՝ բայահիմքի արտահայտած հատկանշային իմաստով՝ ենթակայական դերբայի նշանակությամբ:

Հինհայերենյան հարադրությունների բայական բաղադրիչների դերով հանդես են գալիս հետևյալ բայերը՝ *մալուցանեմ, առնեմ, արկանեմ, խնդրեմ, պահեմ, դնեմ* և այլն, որոնց հետ հարադրություն են կազմում *պալարազ, աւար, ուխտ, աղաթք, անձն, ահ, բան, օրէնք, վրէժ* և այլ գոյականներ:

Գոյական + բայ > ածական փոխակերպական կաղապարով առաջացած բարդությունների սերող հիմքը (բայական բաղադրիչը) հանդես է գալիս ինչպես առաջին (վրէժ խնդրեմ > *վրէժխնդիր*, պահեմ զօրէնս > *օրինապահ*), այնպես էլ երկրորդ հիմքի կառուցատիպով (զաղօթս առնեմ > *աղօթարար*, օրէնս դնել > *օրէնսդիր*):

Դիտարկված կաղապարով առաջացած որոշ կազմությունների բառական արժեքը պայմանավորված է բառակազմական ածանցով, ինչպես՝ *ահ արկանել > ահարկու*, զբանս արկանել > *բանսարկու*, յանձն առնեմ > *յանձնառու* և այլն:

Փոխակերպական այս իրողության ուսումնասիրությունը կարող է ամբողջացնել հայերենի պատմական բառագիտության նկարագրությունը:

Օգտագործված գրականություն

- Աբեղյան Մ. 1965, Հայոց լեզվի տեսություն, Երևան, «Միտք», 699 էջ:
 Խաչատրյան Լ. 2011, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Երևան, «Զանգակ-97», 272 էջ:
 Հովսեփյան Լ. 1987, Գրաբարի բառակազմությունը, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 375 էջ:
 Մուրվալյան Ա. 1959, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 252 էջ:
 Զահուկյան Գ. 1973, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 587 էջ:
 Զահուկյան Գ. 1989, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., 319 էջ:
 Туманян Э. 1971, Древнеармянский язык, Москва, «Наука», 448 с.

Համառոտագրություններ

ա) Աստվածաշունչ մատյան

Առակ - Առակք Սողոմոնի

Ա Եզր - Գիրք Եզրի Ա.

Բ Կորն. - Թուղթ Պաւլոսի Առաքելոյ առ Կորնթացիս Բ.

Բ Օրին. - Երկրորդումն Օրինաց
 Գործ. - Գործք առաքելոց
 Եբր. - Թուղթ Պաղոսի Առաքելոյ առ Եբրայեցիս
 Եսայ. - Եսայի
 Եզեկ. - Եզեկիէլ
 Եսթեր - Եսթեր
 Եր. - Երեմիա
 Թագ. Գ. - Թագաւորութեանց Գ.
 Թուոց - Թիւք
 Իմաստ. - Իմաստութիւն Սողոմոնի
 Դեւտ. - Դեւտական
 Մակ. Ա.Բ. - Գիրք Մակաբայեցոց Ա.Բ.
 Յակո. - Թուղթք Յակոբայ Առաքելոյ
 Յեսու - Յեսու Նաւեայ
 Յովբ - Յովբ
 Նաում - Նաում
 Սաղ. - Գիրք Սաղմոսաց
 Սիրաք - Գիրք Սիրաքայ

բ) Հին հայերենի բնագրային աղբյուրներ

Ագաթ. - Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1909:
 Արծր. - Թովմայ Արծրունոյ Պատմութիւն, Պետերբուրգ, 1887:
 Բուզ. - Փաստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:
 Եզն. - Եզնկայ Կողբացոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:
 Եղ. - Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957:
 Լուսաւորիչ Գր. - Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք, Վաղարշապատ, 1894-1896:
 Խոր. - Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1913:
 Դեւ. - Պատմութիւն Դետոնդեայ Մեծի Վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, ի տպարանի Ի.Ն. Սկորոխոդովի, 1887:
 Յի. ԿԹ. - Յիովհաննոս Կաթողիկոսի Դրասխանակերտոցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:
 Նար. - Մատեան ողբերգութեան, Պուէնոս Այրէս, 1948:
 Սեբեոս - Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Երևան, 1939:
 Փարպ. - Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփլիս, 1904:

գ) Արդի հայերէնյան բնագրերի հեղինակներ

ԱԻ - Ավ. Իսահակյան
 ԴՎ - Դ. Վարուժան
 ԵՕ - Երվանդ Օտյան
 Լեո - Առաքել Բաբախանյան
 ՀԹ - Հովհ. Թումանյան
 Մուր. - Մուրացան
 ՊՍ - Պ. Սևակ

դ) Բառարաններ

Առձեռն բառարան հայկազեան լեզուի (ՆՀԲ), Երկրորդ տպագրություն, Վենետիկ, ի Սուրբ Ղազար, 1865:

ԺՀԼԲԲ - Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1969-1980:

Համաբարբառ հին և նոր կտակարանաց, աշխատասիրություն Թադէոս վարդապետի Աստուածատուրեան Արապկերցույ, ի տպարանի Առաքելական աթոռոյ Սրբոց Յակովբեանց, Երուսաղէմ, 1895:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երկասիրություն երից վարդապետաց, Գ. Աւետիքեան, Խ. Սիրմէլեան, Մ. Ազեբեան, հհ. Ա-Բ, ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1836-1837:

**ТРАНСФОРМАЦИЯ АНАЛИТИЧЕСКИХ КОНСТРУКЦИЙ В СИНТЕТИЧЕСКИЕ
ПО МОДЕЛИ СУЩЕСТВИТЕЛЬНОЕ + ГЛАГОЛ > ПРИЛАГАТЕЛЬНОЕ
В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ
(диахронический аспект)**

Լалик Хачатрян

Резюме

В современном армянском языке выделяется ряд сложных прилагательных, образованных путем трансформации сочетаний *существительное + глагол*. Значение признака обусловлено переходом глагольной основы в причастие.

Рассматриваемые слова восходят к древнеармянскому языку. Их компоненты синтаксически связаны моделью управления: *глагол + прямое дополнение*. Семантически они представляют собой сумму значений составляющих компонентов. Компонентами выступают существительные *սիսիարազ, անի, ուխտ, աղաթ, անձն, տի, բան, օրէնք, վրէժ* и т.д., глаголы действительного залога *մալուցանենմ, առնենմ, արկանենմ, խնդրենմ, պահենմ, դնենմ* и т.д.

В рассматриваемых трансформируемых словосочетаниях глагол может быть первым компонентом (*պահենմ զօրէնս > օրինապահ, պաշտենմ զօրէնս > օրինապաշտ*) или вторым компонентом (*վրէժ խնդրենմ > վրէժխնդիր, զաղթառնենմ > աղթարար, օրէնս դնել > օրէնսդիր, պատարագս մատուցանենմ > պաշարագամալուց*).

Некоторые прилагательные такого типа функционируют с суффиксом *-ու*, ср.: *տի արկանել > տիարկու, զբանս արկանել > բանսարկու, անձն առնենմ > անձնառու, տառ առնենմ > տարառու* и т.д.

Изучение подобных трансформационных моделей имеет важное значение с точки зрения исторического словообразования армянского языка.

Ключевые слова – трансформация, генеративная модель, модель преобразования, сложные слова, предложная конструкция, аналитические сложные слова, синтетические сложные слова.

**TRANSFORMATION OF ANALYTICAL CONSTRUCTIONS INTO SYNTHETIC ONES,
ACCORDING TO THE NOUN + VERB > ADJECTIVE MODEL IN THE ANCIENT
ARMENIAN LANGUAGE
(Diachronic aspect)**

Lalik Khachatryan

Abstract

In the modern Armenian there are several complex adjectives, formed by transforming *noun + verb* combinations. The meaning of the attribute is due to the transition of the verb base into participles.

The words in question originated in the ancient Armenian. Their components are syntactically linked by a control model: verb + direct complement. Semantically, they represent the sum of the values of the constituent components. Components are nouns պատարագ, աւար, ուխտ, աղալթք, անձն, ահ, բան, օրէնք, վրէժ etc. and verbs active voice մատուցանենմ, առնենմ, արկանենմ, խդրենմ, պահենմ, դնենմ etc.

In the present transformable phrases the verb may be the first component (պահենմ զօրէնս > օրինապահ, պաշտենմ զօրէնս > օրինապաշտ) or the second component (վրէժ խնդրենմ > վրէժխնդիր, զաղօթս առնենմ > աղօթարար, օրէնս դնել > օրէնսդիր, պատարագս մատուցանենմ > պատարագամատուց).

Some adjectives of this type operate with the suffix -ու, e.g. ահ արկանել > ահարկու, զբանս արկանել > բանսարկու, յանձն առնենմ > յանձնառու, աւառ առնենմ > աւարառու etc.

The study of such transformational models is important from the point of view of the historical word formation of the Armenian language.

Key words – transformation, generative model, transformation model, compound words, prepositional structure, analytical compound-word, synthetic compound-word.